Կարգապահական գործ թիվ ԿԳ-17176

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի փետրվարի 27-ի թիվ 34-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/25-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ԼԱԵՐՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Արայիկ Ղազարյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 300) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 07.11.2017թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանն ունի 75.000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հուլիսից մինչև 2017թ. սեպտեմբեր ամիսների համար: Համաձայն տեղեկանքի Կարինե Լաերտի Սարգսյանի անդամավճարի ընդհանուր պարտքը կազմում է 195.000 (հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ՝ հաշվարկված 2014թ. օգոստոսից մինչև 2017թ. սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

08.11.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 430-Ա/ԿԳ-17176 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի

4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

09.11.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ՝ Նելլի Հարությունյանին (նիստը նախագահող):

16.11.2017թ. գործը ընդունվել է վարույթ: Խորհրդի նիստը տեղի է ունեցել 12.12.2017թ., ժամը՝ 18:38-ին և 27.02.2018թ., ժամը՝ 18:25-ին:

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 10.11.1997թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 27.02.2018թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանն ունի 75.000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հուլիսից մինչև 2017թ. սեպտեմբեր ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 07.11.2017թ. տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 27.02.2018թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 27.02.2018թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Կարինե Լաերտի Սարգսյանի (արտոնագիր՝ 300, ստացված՝ 10.11.1997թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում հարուցվել է չորս կարգապահական վարույթ (ավարտված վարույթներ), որոնցից երեքը՝ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու, իսկ մեկը՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով: Անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված երկու կարգապահական վարույթներով Կարինե Լաերտի Սարգսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նկատողության, իսկ մեկ կարգապահական վարույթով՝ խիստ նկատողության ձևով: Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու

պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել (կիրառվել է արտոնություն):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:* Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ*:

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար*:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը,* իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանը խախտել է վերը նշված կանոնների պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքներով: Ավելին՝ կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում նաև, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ

կարգապահական վարույթի իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Կարգի 21-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 300) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանի (արտոնագիր թիվ 300) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամի չափով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Կարինե Լաերտի Սարգսյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյան

27 փետրվարի 2018թ.
թիվ ԿԳ/25-Ա
ք. Երևան